Ռուբեն Սևակ

Արցունքին քերթվածը

Այտերն ի վար, այտերն ի վար ուր հավետ
Կը տոչորի հետքը վերջին համբույրին,
Իշի՛ր արցունք, զովությանդ մեջ երկնավետ,
Թող սերերու հետին բոցերը մարին:

Գգվանքներու ծովուն վրա ալեվետ,
Մեռած, թոշնած խոստումներուն վրա ցրտին՝
Իշիր, արցունք, զովությանդ մեջ կենսավետ,
Իշիր սառած երազներուն վրա սրտին:

Համբույրներս թերթերուն վրա ցիրուցան,
Անոնց վրա որ ժպտեցան ու անցան .
Ու խեղճ սրտին մոխիրներուն վրա տրտում
Փլատակներուն վրա տենչին ու հույսին .

Իշի՛ր, արցունք, գորովանքովդ անդադրում: